

Arshak Gevorgyan

Պատ

Դեպքը, որի մասիննուզում եմ պատմել, տեղի է ունեցել երեքուկես ամիս առաջ:

Երկուսս էլ սովորում էինք Ժնևի համալսարանում՝ աստվածաբանության ֆակուլտետի երրորդ կուրսում, երբ գրանցվեցինք մեր համալսարանի շախմատի առաջնության հաղթողի հավակնորդների մրցաշարում: Միմյանց գիտեինք հեռակա, մեր միջև շփումը միշտ կտրուկ էր, սառը, դիպվածային: Երբ ես գրանցվում էի, մասնակիցների ցանկում թռուցիկ նկատեցի նաև նրա ազգանունը: Աթասեն: Սովորական տառակույտ, որն այդ պահին ամեննին էլ չտպավորվեց հիշողությանս մեջ: Գիտեմ՝ շախմատի հարցում փոքր-ինչ մեծամիտ եմ. գուցե գեներ են, հայկական ինքնությանը սերտաձած շախմատային ինքնավստահություն: Բացի այդ, ում հետ մինչ այժմ խաղացել եմ, խոստովանել է, որ ես շախմատից իսկապես գլուխ հանում եմ: Դրա համար պարտական եմ պապիս, ով փոքր տարիքում ձեռքս բռնած տանում էր ինձ Երևանի շախմատի տուն: Տանում էր ու երբեմն պատմություններ պատմում իր պապի մասին: Արծաթագործ վարպետ Խաչատուրը, ում անունը մեր գերդաստանում չորս սերունդ փոխանցվելով անցել էր ինձ, Կարինի գավառի Ամրաջուկ գյուղից գաղթելիս կորցրել էր իր ողջ ընտանիքը: Հայրական տնից նրա միակ հիշողությունը ձեռագործ շախմատի տախտակն էր, որի մեջ թաքցրել ու փրկել էր ծխական Ավետարանը: Այդ տախտակը մինչև այսօր էլ սրբության նման պահվում է մեր երևանյան տանը: Այն ժամանակ դեռ առաջին դասարանում էի: Պապիս պատմածները հիմնականում չէի հասկանում:

Դպրոցում տառերն էինք սովորում, զուգահեռաբար Շախմատի տանը մեզ սովորեցնում էին ֆիզուրների անուններն ու դրանց քայլերը: Մի քանի պարապմունքի ընթացքում սերտեցի քայլերը, ավելին՝ ցանկացած վանդակ առանց դժվարությամբ անվանում էի հենց շախմատային լեզվով, մինչդեռ հայերենի այբուբենի տառերի մեծ մասը դեռևս անծանոթ էին ինձ: Ու ես հասկացա, որ շախմատն ինձ հոգեհարազատ է գրեթե մայրենի լեզվի չափ, մի դաշտ է ու մի լեզու, որ միայն առաջին հայացքից է մատչելի ու պարզ, իրականում որքան շատ ես ճանաչում, այնքան դառնում է խորհրդավոր ու հարուստ:

Այս ամենը պատմում եմ, որ ձեզ հաղորդեմ վստահությանս աստիճանը, երբ գրանցվում էի համալսարանի մրցաշարին մասնակցելու համար, և գերազանցության զգացումը, որ ունեի մնացած մասնակիցների հանդեպ՝ ընդհանրապես, ու նրա հանդեպ՝ մասնավորապես: Տղան, որին առանձնացնում եմ, ազգությամբ թուրք էր:

Թուրք շախմատիստի չեմ ճանաչում, առհասարակ թուրքերին շախմատ խաղալիս չեմ տեսել: Գուցե խաղում են, չգիտեմ, բայց ես չեմ տեսել:

Մրցաշարի ընթացքում ինձ համար առանձնահատուկ ոչինչ տեղի չունեցավ. ես հիմնականում հաղթանակներ էի տանում: Բայց, ի զարմանս ինձ՝ նա նույնպես հրաշալի արդյունքի էր հասել, եզրագծից առաջ մենք հավաքել էինք հավասար միավորներ ու վիճակահանության հեզնանքով հենց վերջին տուրի մեր պարտիան պիտի վճռեր համալսարանի չեմպիոնին: Վճռական դիմակայությունը պետք է սկսվեր առավոտյան ժամը տասին:

Վերջից առաջ՝ եզրագծում մարդիկ սովորաբար լարվում են, անկախ նրանից, թե վերջն ինչ է, նույնիսկ կարևոր էլ չէ, թե ինչի վերջն է: Բայց մեր միջև կայանալիք վերջին պարտիան գոնե ինձ համար ամենևին էլ լարվածության լիցքեր չուներ: Հանդիպումից առաջ ես կատարելապես հանգիստ էի ու վստահ: Վայրկյան անգամ չէի կասկածում, որ հեշտությամբ հաղթելու եմ նրան՝ այնքան էլ չկարևորելով նրա ցուցաբերած փայլուն արդյունքը: Ես չէի էլ թաքցնում մեծամտությունս. այնքան վստահ էի, որ պիտի հաղթեմ, որ նույնիսկ պատրաստ էի խաղալ առանց ձիու, փղի կամ թեկուզ նավակի:

Երբ նստեցինք խաղատախտակի առջև՝ դեմ դիմաց, մեր հայացքները հանդիպեցին, և մենք նայեցինք իրար ավելի երկար, քան երբևէ: Ես ակամա ժպտացի, ինչին նա պատասխանեց ձեռքը մեկնելով՝ ի նշան մարտահրավերն ընդունելու: Ես ևս ձեռքս պարզեցի, և մենք ողջունեցինք իրար. սառը, հպանցիկ ձեռքսեղմում:

Վիճակահանությամբ նա խաղում էր սպիտակներով և առանց հապաղելու երկու վանդակ առաջ հրեց արքայական զինվորը: Առաջին քայլը կատարելուց հետո ուշադիր նայում էր տախտակին՝ ասես վայելելով այդ պահին իր ունեցած առավելությունը, իսկ ես նայում էի տախտակին հակված նրա կերպարանքին: Չի կարելի ասել, թե ես զարմացած էի նրա քայլից. դա ամենապարզունակ ու տարածված քայլն է, նաև՝ ամենաոչինչ չասող առաջին քայլը. դե, տարածք է՝ հսկողության տակ առա, հիմա տեսնեմ՝ դու ինչ կասես...

Շուրջ կես րոպե սևեռուն նայում էի մրցակցիս, այնինչ նրա հայացքը տախտակին էր: Երբ նկատեց, որ պատասխան քայլն ուշանում է ավելի, քան սովորաբար լինում է, բարձրացրեց գլուխն ու նայեց դեմքիս: Ես կրկին ժպտացի, որից հավանաբար ենթադրեց՝ հենց այդ քայլն էլ սպասում էի: Այս անգամ նրա դեմքն անհաղորդ էր, և մրցակիցս կրկին իջեցրեց գլուխը՝ կարծես մի փոքր էլ զարմացած շարունակելով զննել տախտակը՝ անչափ գոհ, որ խաղաքարերից միայն մեկն էր փոխել նախնական դիրքը:

Ես յուրաքանչյուր նյարդով զգում էի, որ մթնոլորտը նրա համար աստիճանաբար դառնում է ճնշող: Ու դա՝ իմ հապաղումի պատճառով:

Ընկերս նման իրավիճակների համար հրաշալի դեղատոմս ունի, փայլուն միտք, ու ես նրա հետ համաձայն եմ. հայերը եթե հաղթում են, նախևառաջ հաղթում են հոգեբանորեն: Ես իմ առաջին քայլը կատարեցի առանց դրա մասին մտածելու: Ասենք՝ ի՞նչ կարիք կա մտածել առաջին պատասխան քայլի վրա, եթե քեզնից առաջ հազարավոր, հարյուր հազարավոր շախմատիստներ ժամանակին այդ մասին մտածել են: Կատարեցի մեկը դրանցից, մեկը, ըստ երևույթին՝ լավագույններից. ի վերջո ես ծանոթ եմ շախմատի այբուբենին: Ես քայլ կատարեցի ձիով և սեղմեցի ժամացույցի կոճակը, որից հետո, ծանոթ զգացում է՝ խաղատախտակի շուրջ կանգնում է ժամանակս, ընդհատվում կյանքս, ու հաջորդ քայլը կատարելու իրավունքն անցնում մրցակցիս: Կյանքիս այդ փոքրիկ ընդհատումի մեջ ես հանկարծ գիտակցեցի կատարածս քայլի անսպասելիությունը և ապշեցի: Սկզբնախաղում ես սովորաբար չեմ խաղում ձիով: Բայց ահա խաղացել էի, արել էի մի քայլ, որ անսպասելի լիներ ոչ միայն մրցակցիս, այլև ինձ համար. Այլոխինի պաշտպանություն: Սա գուցե և ինձ կարող էր հասցնել անորոշության, եթե շարունակեի խաղը այդ քայլի տրամաբանությամբ, ու ըստ երևույթին հենց այդ անորոշությամբ էլ առաջնորդվել էի, այդ անորոշության գայթակղությունն անկասելի էր... Ի վերջո, մեզանից յուրաքանչյուրը ինչ-որ պահի իր կամքից անկախ կարող է դիմել ինչ-որ արկածախնդրության, չգնալ տրորված ճանապարհով, ընդառաջ գնալ որևէ փորձության... Հիմա կարևորն այն էր, որ չմատնեի միտքս, ինչ-որ կերպ քողարկեի անհանգստությունս, որ մի ակնթարթ միայն հայտնվեց դեմքիս: Պիտի խոստովանեմ՝ այնքան էլ հաճելի չէ, երբ տուժում ես քո կատարած քայլից ու հետո էլ ճնշվում այն շտկելու անհնարիությունից: Մնում է մխիթարվել, որ սխալ ոչինչ չես արել, պարզապես արածդ հատուկ չէր քեզ, քո ցանկացածը չէր:

Ինչևէ. երկուսս էլ կատարել էինք մեր առաջին քայլերը, այլևս վերադարձ չկար: Արդեն արագորեն կատարեցինք ևս մի քանի անգիր հայտնի քայլ:

Եվ մրցակիցս սկսեց մտածել: Ես շարունակ հետևում էի նրա շարժումներին, ինձ փոքր-ինչ զվարճացնում էր, թե ինչպես էր կռացել տախտակի վրա և թախծոտ հայացքով նայում էր գլխավորապես իր ֆիգուրներին, կարծես ցավ զգալով, որ դրանք տեսնում էր վերջին անգամ:

Հիմա էլ նա էր հապաղում: Կամ չէր գտնում լավագույն քայլը, կամ գուցե հաշվել էր առաջիկա քայլերն ու պարզապես ցանկանում էր նյարդայնացնել ինձ... Շատ բարի. թող դանդաղի, ի հեճուկս իրեն՝ ես կխաղամ արագ, իր համար

անսպասելի, վստահ: Չէ՞ որ ամենքը գիտեն՝ հայերը հնարամիտ են ու անկանխատեսելի...

Շփոթվածությունը, որ պարտիայի սկզբում մի պահ զգացի և որը կարողացա արագորեն հաղթահարել, արդեն փոխանցվել էր նրան: Սրան նպաստեց նաև այն, որ ես քայլ առ քայլ գիտակցում էի մրցակցիս հանդեպ իմ առավելությունը և զգում էի, որ իրավիճակն աստիճանաբար անցնում է իմ հսկողության տակ... Դե՛ քո հերթն է, ի՞նչ ես մտածում:

Այս հայն իսկապես լավ է խաղում, եղավ մի պահ, որ անհանգստացա՝ գուցե և իրոք ուժեղ է ինձանից: Մենք՝ թուրքերս, միշտ թելադրել ենք հայերին, երբեմն կարողացել ենք ստիպել: Երբ հասկացա, որ դիրքով սկսում եմ զիջել, նմանատիպ մտքեր անցան գլխովս, որից մի պահ ամաչեցի: Ես չեմ ստում ինքս ինձ. հայերին առանձնահատուկ եմ վերաբերվում, ասածս փաստ է թեկուզ միայն այն պատճառով, որ ուրիշների հետ շախմատ խաղալիս նման մտքերն ինձ չեն այցելում: Այս խաղում առանձնահատուկ չեմ ուզում պարտվել: Ահա՛. ժամանակն է վերացնել այս զինվորին...

Կանխատեսելի էր: Ուզում է մաքրել դաշտը: Ինքն էլ է հասկանում, որ իրավիճակն ամբողջովին իմ վերահսկողության տակ է: Խնդրեմ, սա էլ վերցրու, հազիվ թե դիմանաս գայթակղությանը, վերցրու, ձրի եմ տալիս... Երբեք այսքան մոտիկից թուրք չէի տեսել: Նա ինձ բացարձակ չէր նայում, չէր նայում նաև իր շուրջը: Ամբողջ ուշադրությունը սևեռել էր տախտակին ու պայքարում էր կարծես ինքն իր դեմ: Շախմատն անհատական խաղ է, որտեղ, կարծում եմ, բացակայում է բախտի գործոնը, եթե, իհարկե, ցրվածությունը վճռական դեր չի խաղում: Այս փաստն ինձ շատ է ճնշում, երբ պարտվողի դերում եմ, և չափազանց ոգևորում է, երբ հաղթում եմ... Հիմա պետք է որ ոգևորվեմ: Ես զգում եմ, որ մրցակիցս աստիճանաբար բարկանում է:

Նայում էի այն ձիուն, որով մրցակիցս կատարեց առաջին քայլը և մինչև հիմա այլևս չի տեղաշարժել: Հասկանում էի, որ նա դիրքային առավելություն ունի, և վիճակս աստիճանաբար անելանելի էր թվում: Հայացքս անընդհատ այդ ձիուն էր հանդիպում, որը սաստիկ խանգարում էր ուզածս քայլերը կատարել: Հանկարծ հիշեցի մեծ տատիս պատմություններից մեկը, որ պատմել էր, երբ դեռ երեխա էի: Նա ծնունդով Էրզրումից էր և բոլորովին չէր սիրում ձիերին, ու ահա թե ինչու. երբ փոքր է եղել, նրանց հարևանությամբ հայերի ընտանիք է ապրել, որոնք մի ձի են ունեցել: Տատիս խստորեն արգելել են խաղալ ձիու հետ և շոյել նրան՝ վախենալով ու վախեցնելով նրան, որ կենդանին կարող է վնասել իրեն: Տատիս մեջ աստիճանաբար վախ է առաջացել այդ կենդանու հանդեպ, ինչից հետո սկսել էր չսիրել ձիերին... Այս

պատմությունը հիշելով՝ չկարողացա զսպել ծիծաղս. հայի ձին վախեցրել էր տատիս, հիմա էլ փորձում է պարտության մատնել ինձ: Եվ ես սկսեցի բարձրաձայն ծիծաղել... Այնուամենայնիվ, ճիշտը փոխատեղումն է, արքան միշտ պիտի ապահով լինի:

Այ քեզ բան. ուրախանալու հիմք հաստատ չունի, հավանաբար զվարճալի դեպք է հիշել ու դրա վրա է ծիծաղում... Ծիծաղի՛ր, ծիծաղիր, ծիծաղում է նա, ով վերջինն է ծիծաղում: Խնդրեմ. այս գրոհը անկասելի է: Ո՞ւր պիտի գնա... Շա՛խ:

Այդքան զինվոր շահեցի, նյութական առավելության հասա, բայց դիրքս ակնհայտորեն վատ է: Ասես ամեն կողմից վտանգ է սպառնում: Գաղափար չունեմ, թե որ քայլն է ճիշտ: Լավ. այսպես կարծես ավելի ապահով է...

Ըհը. հիմա ժամանակն է փոխանակումների: Արքան կդառնա լրիվ անպաշտպան...

Չէ, հաստատ ինձնից լավ է խաղում, դե հայերը նույնիսկ աշխարհի չեմպիոն են ունեցել... Ջարմանալի է, բայց վերջին քայլերն անում եմ՝ հետո եմ մտածում. ճի՞շտ քայլ արեցի, թե՞ սխալ: Ժամանակս էլ կարծես ավելի քիչ է:

Գրո՛ղը տանի... Թագուհին պիտի պահեի, պիտի չփոխանակեի: Լավ, ոչինչ, արդեն հետ եմ բերել որակը, զոհաբերություններն իզուր չանցան: Մի բան էլ ավելի՛ հիմա արդեն ես զինվոր ունեմ, ինքը՝ ոչ, այս զինվորը պիտի հասցնեմ առաջին հորիզոնական... Ձիուս և արքայիս օգնությամբ... Գնաց:

Սրա դեմն անհնար է առնել... Ինձ մնում է ապավինել նրա սխալին: Մենք նաև մեր պատմության ընթացքում ենք շատ հաճախ այդպես վարվել: Ու ճիշտ ենք արել. հայերը չափից ավելի զգացմունքային են, չափից ավելի տաքարյուն ու չափից ավելի անհամբեր: Նրանք ավելի շատ իրենց սխալներից են տուժել, քան մենք ենք արժանի եղել նրանց նկատմամբ առավելություն ստանալու: Դե սխալվի՛ր, սխալվի՛ր, սխալվի՛ր...

Հենց այդ անկյունում էլ կմնաս: Եթե որոշել ես չհանձնվել ու մաքառել մինչև վերջ՝ հենց այդտեղ էլ մատ կստանաս: Իմ ձիուց, երևում է, սարսափում ես...

Մի՞ թե փրկություն չկա, մի՞ թե չի սխալվելու...

Քեզ տեսնեմ... Գրողը տանի... Ես զգացի, որ խաղադաշտում միայնակ ու մերկ մնացած նրա արքան այլևս ոչ մի քայլ չունի, իմ շտապողականությունը փրկեց նրան. պատ... Նա վերջապես հասկացավ, թե ինչ է տեղի ունեցել, դեմքը ողողվեց երջանիկ ժպիտով, ձեռքը մեկնեց ինձ ու ակամա ասաց՝ շնորհակալություն:

Նա իսկապե՞ս սխալվեց... Այո՛, պատ: Ես չպարտվեցի: Խաղն ավարտված է: Սա ոչ- ոքի է: Ես չպարտվեցի՛ ...

Շախմատային մեր այդ դիմակայությունից անցել է հարյուր օրից ավելի՝ երեքուկես ամիս: Սա հայի և թուրքի միջև կայացած շախմատային սովորական մի պարտիա էր, որի պես հազարավոր պարտիաներ են եղել ու դեռ կլինեն: Ամբողջ ամռան ընթացքում ես սպասում էի, թե երբ են վերջանալու արձակուրդները և երբ եմ վերադառնալու ժնն՝ թուրք մրցակցիս հետ ևս մեկ պարտիա խաղալու համար: Այդ մրցաշարում երկուսս էլ հաղթող ճանաչվեցինք, բայց ամենքն էին ընդունում, որ պատը շատ անտրամաբանական ավարտ էր: Ես շատ էի ցանկանում նորից խաղալ նրա հետ: Կհաղթեմ, թե կպարտվեմ՝ կարևոր չէր, նույնիսկ ոչ- ոքիին էի համաձայն: Ոչ-ոքի, որը, սակայն, չէր արձանագրվի պատի միջոցով:

Հիմա պատկերացրեք, թե ինչ եմ զգում ես, երբ հասկանում եմ, որ մեր երկուսի խաղացած այդ պարտիան այդպես էլ կմնա միակը, և դրա արդյունք պատը կմնա խորհրդանշական, կմնա շարունակությունից զրկված մեր հարաբերություններում իբրև անառիկ ու անսասան ամրոց ու այլևս երբեք չի քանդվի... Ես ժնն վերադառնալուց հետո միայն իմացա, որ ամռանը Ստամբուլում տեղի ունեցած ցավալի ահաբեկչության տասնյակ զոհերից մեկը եղել է իմ ուսանողական ընկերը: Իմ ընկերն, ում հետ այդպես էլ երբեք չխոսեցի: Հանգչի՛ր խաղաղությամբ, իմ թուրք մրցակից ու ... եղբա՛յր:

...Այն, ինչ կարդացիք, 2025 թվականի վերջին տպագրվել է ժննի համալսարանի ուսանողական թերթում: Շարադրանքի համար ինձ շնորհվեց դրամական մրցանակ, որով հաջորդ արձակուրդներին, ամենայն հավանականությամբ, կմեկնեմ Թուրքիա:

Ես պետք է այցելեմ նրա գերեզմանին:

Stalemate

This story is about two students of Geneva University-an Armenian and a Turk, going through a complicated state of being during a chess game against each other, recalling the memories of their life, that make them so different and hostile. This is a silent conversation between two hostile societies, two standpoints, and two faces of the same reality. Each move on the chessboard is a challenge, a desire to understand the opposite reality. This “battle” becomes an embodiment of a centuries-long revulsion between the two peoples, their path towards the rapprochement, always ending in stalemate, where one does not win, while the other does not lose. And this is why one of them wants to change the reality, as the stalemate means that the circumstances are more powerful than the will to make a step towards each other. But again we witness the impossibility to change things for the better, as there is no chance for another battle...

Arshak Gevorgyan

Stalemate

The event I intend to tell you about took place three and a half months ago.

Both of us were third-year students at the Faculty of Theology, at the University of Geneva, when we enrolled in the Candidates Tournament for our University's Chess Championship. We hardly knew each other; our communication was always brief, impersonal and occasional. When I was enrolling, I noticed his surname on the participants' list: Ataseven. It was just a usual set of letters, which wasn't imprinted on my mind at all. I know I am a little bit arrogant when it comes to chess; maybe it's genetic – chess-related self-confidence connate with the Armenian identity. In addition, everyone I have played chess with so far has admitted my superiority. I owe my grandfather a lot; in my childhood he used to take me to Yerevan Chess House holding my hand. On our way he sometimes told me stories about his own grandpa. Silversmith Khachatur, whose name was passed down to me through four generations, lost his whole family while migrating from the village of Amrajuk of the province of Karin. The only memory from his parental home was a handmade chessboard, in which he hid and saved the Diocesan Gospel. This board has been kept as a sacred object in our house in Yerevan up to date. I was still in the first grade at school at that time and mostly didn't understand my grandpa's tales.

We were learning letters at school; at the same time, at Chess House we were being taught the names of chess pieces and their moves. I mastered the moves in a few lessons; moreover, I didn't have any difficulty naming the squares on the board using the chess language, whereas most letters of the Armenian alphabet were still unknown to me. Thus I realized chess was almost as dear to me as my mother tongue – one field, one language. I realized chess was only simple at first sight; in reality, the more you got to know it, the more mysterious and interesting it became.

I am telling all this to demonstrate how confident I felt when enrolling in the university competition, as well as to show my sense of superiority over other participants in general, and him, in particular. The guy I mark out was a Turk. I don't know any Turk chess-player; I have never seen any Turk playing chess. Maybe, they play it, I don't know, but I've never seen it.

For me nothing special happened during the tournament; I mostly won. But, to my surprise, he produced impressive results, too. Before the final we had earned equal scores, and by an irony of the draw, it was our last game that was to determine the university champion. That final confrontation was to start at 10 a.m.

In the final people usually get tense, regardless of how it can end. But the last game to take place between us didn't create any tension for me at all. Before the meeting I was perfectly relaxed and confident. Neglecting his excellent result, I didn't doubt for a moment that I'd defeat him easily. I didn't even disguise my arrogance; I was so convinced of my victory that I was ready to play without the knight, the bishop or the rook.

When we sat down at the chessboard, face-to-face, our eyes met and we looked at one another longer than ever. I smiled automatically, to which he responded by stretching out his hand to show he was taking up the challenge. I stretched out my hand as well, and we greeted each other with a cold casual handshake.

By draw he played as white. Without hesitation he moved the king's pawn two squares forward. After the first move he watched the board attentively, as if he was enjoying his advantage, while I was looking at his figure bent over the board. I can't say I was surprised at his move; it was the simplest and commonest move and, besides, it meant nothing as a first move. I just took control of it. Let's see now what you will say...

I gazed at my rival for about half a minute; however, his glance was cast on the board. When he noticed that the counter-move was delayed longer than usual, he raised his head and looked at my face. I smiled again, and he probably thought it was the very move I had expected. At that moment his face was unemotional, and he bent his head again. He continued to examine the board a little surprised and extremely pleased with the fact that he had only moved one piece.

I felt with my every nerve that the atmosphere was gradually becoming heavy for him. And that was because of my delay.

A friend of mine has a wonderful remedy for such situations, a brilliant idea, and I agree with him: if Armenians win, they first and foremost win psychologically. I made my first move without thinking about that. Why do you have to think over the first counter-move, if thousands, hundreds of thousands of other chess-players have thought it over before you? I made one of these moves, one of the best, in fact. After all, I am well aware of the chess alphabet. I moved the knight and pressed the chess clock button, after which there came a familiar situation – the time around the board stops, my life is interrupted, and the rival gets the right to make the next move. During this little interruption in my life I suddenly realized the unexpectedness of the move I had made and was astounded. I never start with the knight. But in fact, I had done it; I had made a move which was to surprise not only my rival but also myself – Alekhine's defence. This could lead to uncertainty myself, if I continued the game applying the logic of the previous move. And I had most likely been guided by that very uncertainty; the temptation was irresistible. After all, at some point each

of us may want to have some adventure, some new experiences rather than keep to the beaten track. The important thing at the moment was not to reveal my thoughts and somehow hide my worry, which only appeared on my face for an instant. I must confess it isn't so pleasant to suffer from your own move and then be strained because it's impossible to correct it. You are just consoled that you have done nothing wrong; it's just that your move was not typical of you; it was not what you desired.

Whatever, both of us had made our first moves and there was no way back. Next, we quickly made a few other well-known moves.

Then my rival began to ponder. I always watched his movements, somewhat amused at the way he bent over the chessboard looking at his pieces sadly as if he felt painful to see them for the last time.

Now he was delaying a move. He either couldn't find the best move or, maybe, had already estimated his further moves and was just trying to make me nervous... Very well, let him delay. In response, I will make quick, unexpected and confident moves. Everyone knows Armenians are keen-witted and unpredictable.

The confusion I felt for a moment at the beginning of the game and could quickly overcome had already been transmitted to him. That also happened because step by step I acknowledged my superiority over my rival and felt I was gradually taking the situation under control... Well, it's your turn now. What do you think?

This Armenian guy plays really well; I worried for a moment – indeed, he may be stronger than me. We Turks have always underestimated Armenians, and sometimes we've forced them to do things. When I understood that I was yielding to him in position, similar ideas crossed my mind, and for a moment I felt ashamed. I don't deceive myself – I have a special attitude to Armenians; what I say is a fact just because such ideas don't occur to me when I play chess with others. I don't want to lose this very game, especially. Here goes, it's time to eliminate this pawn.

It was predictable. He wants to clean the field. He understands the situation is fully under my control. Here you are, take this one too; you can hardly resist temptation. Take it; I am giving it to you for nothing... I had never seen a Turk so close by. He wasn't looking at me at all; neither was he looking around. His whole attention focused on the chessboard and he seemed to be fighting against himself. Chess is an individual game, where, I think, luck doesn't matter unless, of course, distraction plays a decisive role. This fact bothers me a lot when I am losing and makes me highly excited when I am winning... I must be excited now. I feel my rival is gradually losing his temper.

I was looking at the knight my rival had started the game with. It hadn't moved so far. I understood that he had a positional advantage, and my position seemed more and more vulnerable. My glance kept on falling on the knight which prevented me from making my desired moves. Suddenly, I remembered a story my great grandmother had told me in my childhood. Born in Erzurum she didn't like horses at all. And here's why. When she was a little girl, there was an Armenian family living in the neighborhood. This family had a horse. My granny was strictly forbidden to play with the horse and pet it fearing and being intimidated that the horse would hurt her. Gradually, she developed a fear of the animal, which led to her dislike... Recalling this story I couldn't help laughing – the horse of Armenians had frightened my granny, and now it was trying to defeat me. I started laughing loudly... Anyway, the right thing to do is castling – the king must always be safe.

Well, really! He has no reason to rejoice. He must have recalled a funny episode; that's why he's laughing... Let him laugh; he laughs best who laughs last. Here, this attack is inevitable. Where must he go? Check!

I've taken so many pawns and gained material advantage, but my position is definitely weak. It feels like I am threatened. I have no idea which move is right. Well, this way seems safer.

Ok, it's time for exchanges. The king will become completely vulnerable.

No, he really plays better than me. Armenians have even had a World Champion... Strangely enough, I've made my latest moves without thinking first. Have I made a good or a bad move? And my time seems to be elapsing.

Damn it! I should have kept the queen, I shouldn't have exchanged her. Never mind, I have already won the exchange; my sacrifice wasn't futile. Even more, I've got a pawn, and he hasn't. I have to bring this pawn to the first rank... With the help of my knight and king... Here we go.

I can't do anything about it... All I can do is to hope he'll make a mistake. We have often resorted to this method in the course of history too. And we've done the right thing. Armenians are too emotional, too hot-blooded and too impatient. They have rather suffered from their own mistakes than from our advantage over them. So make a mistake, do make a mistake!

You'll stay where you are. If you decided not to surrender and fight till the end, you'll be mated right there. It looks like you're terrified of my knight...

Isn't there any escape? Isn't he going to make a mistake?

Come on... Damn it... I understood that his king standing on the field lonely and exposed had no more moves to make; my haste saved him – it was a stalemate... He finally

realized what had happened. He was all smiles; he extended his hand and forced himself to thank me.

Did he really make a mistake? Yes, it's a stalemate. I didn't lose. The game's over. It's a draw. I didn't lose!

More than a hundred days has passed since our game. Three and a half months. It was a usual chess game between an Armenian and a Turk; there have been and will be thousands of other games like this. During the whole summer I had been waiting for the end of the holidays and for my return to Geneva in order to play another game with my Turk rival. We had both been declared winners in that competition, but, by everybody's admission, the stalemate was a very illogical end. I wished to play with him again very much. Whether I'd win or lose was not important; I would even agree to end the game in draw which wouldn't be recorded as a stalemate.

Now imagine what I feel when I realize that the game of ours will always remain the only one we played, and the resulting stalemate will be a symbol of an impregnable and unshakable fortress in our relations, which will have no continuation... Only after returning to Geneva did I learn that my university friend had become a victim of the deplorable terrorist attack in Istanbul in summer. A friend who I never talked to. RIP, my Turkish rival and ... brother!

... This story was published in the student's newspaper of the University of Geneva in 2025. For this composition I was granted a monetary prize, which I will most likely use to go to Turkey for my next holiday.

I have to visit his grave.